

16306

16307

16308

16309

16310

16311

16312

16313

29199

7-29

579

Handwritten markings, possibly numbers or symbols, in the upper right area of the page.



891.99-1

Հրատ. Փիլիպպոս Վարդապարեանի

Դ Ա Շ Ն Ա Կ Ն Ե Ր

Յովհաննէս Թումանեանցի



Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպար. Յ. Մարտիրոսեանցի. | Կնոք. Ս. Մարտիրոսեանցի.
Орбелиановская ул. № 1 | 2.

1896

3605

W



Дозволено цензурою. Тифлисъ, 15-го апрѣля 1896 года.

Ն Ա Ն Ե Ր Կ Ա Ն Ք

Լեռներ, ներշնչւած դարձեալ ձեզանով,
Թնդում է հողիս աշխօյժով լրցւած
Եւ ջերմ ըղձերըս բաղլից հալածւած
Չեղ մօտ են թռչում յախուռն երամով:

Չեղ, ձեզ վերստին, ամպնմած լեռներ,
Կեանքի տխրութեան ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս և ծանրաթախիծ
Հոգուս ձայները ձեզ բերում նրւէր:

Քեզ մօտ եմ գալիս, իմ հին տրամութիւն,
Վեհափառ դայեակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ չէիր ինձ հանդիստ տալիս՝
Սրբտիս ականջին պատմելով թագուս...

6824.57

Ո՛վ, որ կանչում ես զիշեր ու ցերեկ
Հազար ցաւերով, Հազար ձևերով...
Ոգևորութեան հրդօր թւերով
Քեզ մօտ եմ գալիս, հայրենիք իմ հէզ:

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քո ծաղիկներին ծաղիկ աւելցնեմ,
Այլ դառն հեծութեան հառաջանքներով
Այլ անդրնդախոր ձորերը պլցնեմ...

Չորեք, այ ձորեր, ս՛ււ, լայնաբերան,
Սրբոխ այ տանջող վերքերի նրման,
Աստուծոյ հարւածի հետքերն էք դուք էլ,—
Չեզ մօտ եմ գալիս,— ուզում եմ երգել:

Դուք էլ խօսացէք, դուք էլ պատմեցէք,
Չեր անդունդներով եկէք, չափւեցէք,
Տեսնեմ դուք էլ էք այնքան մեծ ու խոր
Հոգուս անյատակ թախի՞ծն է ինչ որ...

Ի Ո Ւ Թ Ա Ն Ի Ե Ր Կ

Արի դու՛թան, վա՛րի դու՛թան,
Օրն եկել է—ճաշ դառել,
Առք *) շուռ տուր, խոփիդ դուրբան,
«Օրհնեալ է Աստուած, հօրովէլ»:

Քաշի՛ր եզը, ուսի՛դ մատաղ,
Քնշի՛ր, քաշենք—վար անենք,
Ճիպտին արա, քըշի՛ր հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը զանգատ զընաց՝
Քեօխվէն կըզայ—կըծեծի,
Տէրտէրն օրհնեց, անվարձ մընաց՝
Կըբարկանայ—կանի՛ծի:

Չեռքս դատարկ, ուժըս հատած,
Հազար ու մին ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Ին օրն եկան թովջի արին,
Հարկ են ուզում տէրութեան,—

*) Առք—խոփի վերցրած հողը:

Ի՞նչ տամ կողին ու բեգարին...
Վարի, վարի իմ գութան:

Ինչ որ աչքս բաց եմ արել
Պակաս եմ ու պարտապան.
Քո մաճրդ եմ ձեռքըս առել,
Իմ ապաւէն—իմ գութան:

Ասուած հերու կարկուտ զըրկեց,
Բարկացել էր ինձ վըրայ,
Մի կոշմից էլ բանդէն *) զըրկեց,
Կորչում էի սովամահ...

Բայց չըզիտեմ ես վըհատել,
Սով, եկ **) լինի թէ երաշտ,
Խով ու ձևիչրդ կարկատել,
Դուրս եմ եկել կրկին դաշտ...

Արի գութան, վարի գութան,
Օրն եկել է ճաշ դառել,
Առը շուռ տուր, խովիդ դուրբան,
«Օրհնեալ է Ասուած, հօրովհէլ...»

1887.

*) Հողեղէնը, մարդը.

**) Անձրևային

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Իմ եղբայրները օտարութեան մէջ
Ինձ ասում էին, — «Կարօտ ենք, երզնէ,
Մեր հայրենիքի երգերիցն ասա.

Քո երգից նորա
Մայրական զւարթ
Հողի ու ջրի
Եւ մեր հարազատ
Հայ ժողովրդի
Համն ու հոտն առնենք,
Որ մըխիթարենք...

Միբոս լըցեցաւ, և հառաչեցի...
Նրանք էլ ինձ հետ սաստիկ ցաւովի
Ազադակերով արտասուում էին.

Եւ հոսում էին
Արտասուքները
Տխուր աչքերից,
Եւ մեր ձայները
Մի ծանօթ կսկիծ
Ուժեղացնում էր
Եւ միացնում էր...

Եւ, տխրութեան մէջ կամ թէ խնջուքի,
Օտար աշխարքում,
Մենք այսպէս էինք մեր հայրենիքի
Երգերը երգում...

1892

Վ Ա Տ Օ Ր Ե Ր

Յուրտ է, իմ ընկեր, և հողմ ահագին.
Սև թևերը լայն փրուած մեր գլխին
Խուլ որոտում է երկինքը խաւար.
Գէս ու դէն ցրւած ամպերն հողմավար
Փնտրում են, կարծես, մի տեղ-օթևան
Մոլորւած մարդու մըտքերի նման:

Այս աղէտակոծ, մոլի և չքնչին
Կեանքի ցաւերի, դաւերի միջին,
Այս խաւար, ճնշող, ցուրտ մթնոլորտում
Հանգիստ չեն, ընկիր, նաև իմ հոգում
Մտածմունքներս, տենչերս աննենգ.
Նոյնպէս հալածւած, նրանք էլ երբէք
Չեն կարողանում դտնել ապաստան—
Երկրնքի ցըրւած ամպերի նըման:

1892.

ԵՐԳՉԻ ՎՐԷԺԸ

Ծանրը հեծութեան ժամանակների
Եւ ճընշումների անըզգայ որդիք,
Կամեցայ սիրել, սակայն դուք բարի
Սիրտըս ու հոգիս գայրոյթով լցրիք:
Բայց զրա համար ես այնպէս կերգեմ,
Որ այդ ձեր սիրտը ցաւից պատառի,
Տըխուր ձայներով կը թունաւորեմ
Հանգստութիւնը դալոց օրերի:
Յուսահատութեան թախծալի երգով
Լեղի կը զարձնեմ ձեր կեանքը բոլոր,
Եւ դուք կարտասուէք լիացած աչքով,
Խնջոյքների մէջ նստած գըլխակոր:
Եւ իստ վրէժը գայրացած երգչի
Չեզ կը հետևի մինչև գերեզման,
Չեր սիրտը կայրի, հոգին կը տանջի...
Եւ կը տառապէք այսպէս յաւիտեան:

1892.

ՔՐԻՍՏՈՍԵ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Անապատի մէջ խաւար ու տխուր,
Յրւած քարերից մի քարի վրայ,
Գլխակոր նստած, մտախոհ և լուռ,
Աշխարքի մասին մտածում էր Նա:

Նորա ճակատը մութն էր առաւել
Քան անապատը զիշերւայ մթնում.—
Նա պատրաստում էր սէր, լոյս ծաւալել
Մարդկային կեանքի մութն անապատում...

Այնտեղ լուռ էր աղմուկն ահագին
Անօրէնք երկրի ամեն ծայրերից,
Եւ վշտանում էր սիրտն սոսուածային
Մոլութեան երգի, սուգի ձայներից...

Եւ անապատում մի քարի վրայ
Միայնակ նստած արտասուում էր Նա:

1892.

ԱՆ, ԵՍ ԵՐԱՆԻ...

Ա՛խ, ես երանի
Կայծակ լինէի,
Որոտ-ճայթիւնով
Մռայլ ամպերից
Թռչէի վերև,
Զարկէի ուժգին
Եւ պատառէի
Կամարն երկնքի,
Յոյց տալի երկրին
Գաղտնիքը վերին,
Որ տեսնէր այնտեղ
Ինչ բան կայ ահեղ,
Կամ ով է նստած
Եւ ուր է Աստուած...

1892.

ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ

Իւր խոր հայեացքով երկինքը մի օր
Ներքեւ—մայր երկրի երեսին նայեց,
Տեսաւ զեղեցիկ դաշտեր, սար ու ձոր,
Անտառներ, ծովեր... և սիրահարեց:
Երկիրը՝ թմրած, տխուր, ցրրտամեռ,
Յանկարծ սթափեց զարունքեայ կեանքով,
Վառւեցին սրտում հըրեղէն բոցեր
Եւ շնչեց հազար ծաղկանց բուրմունքով...
Եւ պինդ սիրեցին այսպէս իրարու
Իրարից բաժան, իրարից հեռու

Երկինք և երկիր...

Բայց երբ է սէրը արգելք հարցընում.
Հէնց որ գալիս է զիշերը հասնում,
Երկինքն աստղալի, անհամբեր, ազահ,
Իւր հազարաւոր աչքերը բանում,
Հիացած նայում սիրուհու վրայ—
Մինչև լուս նայում և չի կշտանում:
Եւ աստղ-աչքերը վառ վառ ցոլանում,

Ընկնում են երկրի կրճքերը ջրային,
Որոնք փրփրում են, ուռչում, բարձրանում,
Ճգնում են հասնել վեր—սիրահարին:
Եւ սիրող երկինքն աւելի վառւած,
Գիշերեայ բոլոր զուգսով զարդարւած,
Փրուում է իրան բոլոր փառքերը,
Իւր բոլոր տենչերն, այլուղ կրքերը,
Վառւում, բորբոքում,
Փարում է, զրգւում...

Եւ երբ չի հասնում իւր անհաս սէրին,
Լուռ լուռ ճպում է ցոլուն աչքերին,
Յոլուն աչքերից զիշերեայ մըթնում
Երկրի երեսին ցողեր են ընկնում,
Մարգարիտ ցողեր—արցունք երկնային...
Իսկ այդ ժամանակ երկիր-սիրուհին
Հազար շրթունքով սարերի ծայրից
Համբույր է տալիս թխպոտ ամպերին,
Անհուն ծովերից, անթիւ ծովերից
Հազար կրճքերով ձգտում է եարին.
Տանջւում է ուժգին, վառւում է սէրը,
Յուզւում են, փրփրում նորա ջրերը,
Սակայն չեն հասնում քնքոյշ փափագին,
Ծանրը տնքում են, հեծնում ահագին...

Ամպերի տակից,
Իւր մթին զահից

Բոլորը տեսնում լուսինը անքուն
Եւ բանաստեղծին պատմում է թագուն,
Թէ ինչպէս ծովը զիշերւայ մթնում
Ուռցնում է իրան կուրծքը տարփայլի,
Երկինքը հազար աչքերով ժրպտում
Եւ գաղտնի սիրոյ համբոյր է տայլի.
Եւ իրար համար երգեր են ասում,
Իրար փայփայում, զգում, արտասում,
Ինչպէս կենդանի, զգայուն մարդիկ...
Եւ բանաստեղծը տխրում է սաստիկ,—
հախանձում է նա, թէ ինչու չունի
Ինքն էլ այնպիսի մի վեհ սիրուհի:

1894.

ԶՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Ժամանակով կատուն ճոն էր,
Զունն էլ գլխին գդակ չունէր.
Միայն զիղեմ ոչ որդեանց-որդի
Ճանգել էր մի գառան մորթի:
Էկաւ մի օր՝ ձմրանամբոսին,
Կատուի կուշտը տարաւ մորթին.—
«Յար՝ աչոյում, ուստա Փիսօ,
Գլուխս մրսեց, ՚ի սէր Ատածոյ,
Առ էս մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի գլխիս չարմար.
Վարձդ կը տամ, միանմիտ մնայ,
Միայն խնթրում եմ, շատ չուշանայ:»
— «Ա՛չքիս վրայ, քեռի Քուչի,
Մի գդակ ա՛ խօ մի քուրք չի,
Քու թանգագին խաթեր համար
Ուրբաթ օրը համեցէք տար:
Փողի մասին աւելնորթ ա,—
Մեր մէջ խօսալն էլ ամօթ ա.

Ինչ մենձ բան ա, Ինչ հէր օխնած,
Հա, Հա, Հա... մի գրդակի վարձ...»
Ուրբաթ օրը քեռի Քուչին
Ուտից առաջ, բաց բաց կուճին
Թափ թափ տալով, ծանդրը ու մեծ,
Ուստա կատի շէմքում կանգնեց.
«Ուստէն ո՛ր ա... փափախս ո՛ր ա...»
—Մի քիչ կացի, հրէս կերեայ:

*
* *

Ուստէն էկա քուրքը հագին,
Չանը տեսաւ, բեխի տակին
Իրան իրան քիչ փնթփնթաց
Ու մուշտարու վրայ թընդաց,—
«Յըրտանտար էլար... վնհ, տնաշէն,
Չես թողնում, որ մի շունչ քաշեն.
Սհաթ խօ չի, դեռ հլա նոր եմ
Յըցամ տեղ, թէ որ կարեմ:»
—«Իէ, հէրօխնած, էթէնց ասա,
Էդ բարգաննալը էլ ընչիս ա.
Փող եմ տեղ, շուտով կարի,
Թէ չէ, ասա՛ էդուց արի...»
Ասա Քուչին ու նեղացած
Վերադարձաւ գըլուխը բաց:

*
* *

Մին էլ եկաւ, գարձեալ չըլար.
Էս անգամը դիպան իրար.—
Էլ անպատիւ, պետուր խօսքեր,
Էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,
Էլ գո՞ղ Փիսօ, էլ քնչալ Չուն...
Բանը հասաւ դիւանբաշուն:
Չունը մինչև գընաց-եկաւ,
Ուստա կատուն կոտորն ընկաւ,—
Գլուխն առաւ ու մի գըշեր
Հնչդէ—կորաւ. էն կորչին էր...

*

Էն օրւանից մինչև օրս էլ
Չունն էս բանը չի մոռացել,
Մտքումն հլա դեռ պահում ա.
Որտեղ կատին պատահում ա,
Վրայ ա վաղում մորթուց քաշում,
Իրան մորթին եզ ա ուզում.
Իսկ սեւերես կատուն յանկարձ
Եզ ա դառնում ու բարկացած
Փշտացնում ա,—մըթամ նոր եմ
Յըրցամ տըեղ, թէ որ կարեմ:

1886.

6824-57

Հ Ա Մ Ե Ր Կ

Վրտակը ժայռից ներքև է թրուչում,
Թափ առած ընկնում քարերի գլխին,
Ջարկում աւաղին, շաչում է, ճըչում,
Ճըչում անհանգիստ փրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին ձայնով պառաւած
Չայնակցում է իւր թռունիկի երգին,
Այնպէս է մօտիկ անտառը կամաց
Արձագանք տալիս ջրի աղմուկին:

Սակայն բնութեան զրւարթ համերգի
Անխօս ունկնդիրն յաւիտենական—
Փայռը մտախոհ՝ իւր այնպտ մտքի
Ետևից ընկած լրսում է նրբան:

1890.

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ւ Ա Մ Պ

Վաղուց թողած բարձր ու կանաչ
Գահը իրանց հանդստութեան,
Երկու սև ամպ հողմի առաջ
Գընում էին հայածական:

Սակայն հողմը չար հոտանքով
Քաժանել չէր կարողանում,
Որքան նրանց լայն երկընքով
Գէս ու դէն էր քշում, տանում...

Եւ անդադար զընում էին
Քըշւած հողմի կատաղութեամբ,
Իրար կըպած, ի միասին
Երկու սև ամպ, երկու սև ամպ...

1894.

ԳԻՂԵՐԱՅԻՆ ՄՏՈՐՄՈՒՆՔ

Է՛յ աստղեր, աստղեր,
Երկրնքի աչքեր,
Որ այդպէս ցրւած
Զողում էք վառւած,—
Գիտե՞ք թէ ինչեր
Կամ ինչ գիշերներ
Յիշեցնում էք ինձ...
Ապշեցնում էք ինձ.—
Զողում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ,
Աշխոյժ ու կայտառ,
Ձեզ նման պայծառ,
Թըրթըռում էի
Եւ ցաւ չունէի:
Զողում էք և արդ,
Երբ երիտասարդ,
Անհուն յոյսերով,
Խանդավառ սիրով
Եւ միշտ ուշառու
Նայում եմ հեռու...
Կը շողաք նաև
Ղերիմիս վերև...

1891.

ԱՄԱՌԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ

Ամբան զիշերույ երկինքն աստղալի,
Իւր հսկայական վըրանի ներքոյ
Գրկած շարքերը բարձր լեռների,
Պատմում է երկրին մեծութիւնն Աստույ:

Եւ բարիքներով լցւած-լիացած
Երկիրն ունկնդիր երկնքի ճառին,
Քնելուց առաջ, խոնարհ, երկիւղած
Փառաբանում է մեծազօր Տէրին:

Եւ փառք են տալիս իմ շուրջը բոլոր
Ամեն մի տերև, ամեն շընչաւոր...

1892.

Մէկն էլ այն է հոգուս անթիւ տենչերի,
 Որ իմ աչքով տեսնեմ յոյզը ջրրերի,—
 Ալեկոծւող ովկիանոսի մի տագնապ.
 Ահեղագոչ ալիքները լեռնաչափ
 Քարձրանային իրար վրայ անդադար
 Եւ մըրիկը նրանց վրայ սաստկանար...
 Եւ զխտէի ժայռի գլխին ես կանգնած,
 Երբ հողմակոծ կոհակները մոլեղնած՝
 Մինչև երկինք փրփուր ու ջուր պայտէին
 Եւ, ուռնալով, բարձր ափերին դարկէին,
 Եւ խորտակւած, օրհասական հեծձանքով
 Հեռանային խաղաղացած յորձանքով,
 Եւ, խլաձայն մըռնչալով, նորից նոր
 Քարձրանային աղջամղջում հեռաւոր.
 Նոր յարձակմունք, անհաշտ կռիւ դայրագնած...
 Եւ նայէի ժայռի գլխին ես կանգնած:

1892.

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՒ

Ծանր ալիքները լայն ովկիանոսի՝
 Խառնելով շերտը մուսլ մըշուշի,
 Կուտակուում էին գոռալով ահեղ
 Եւ մըրիկն ուժգին շնչում էր այնտեղ,—
 Անեզր և անվերջ
 Տարածութեան մէջ:

«Կանգնեցէք», գոչեց վրձինը ձեռքին
 Ծեր նկարիչը յուզւած տարերքին.
 Եւ, հնազանգւած հանձարի ձայնին,
 Մութ ալիքները, փոթորկի ժամին,
 Կտաւի վերայ
 Կանգնած են ահա:

Մ Ի Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Ք *)

Ես տեսայ Հսկայ
Տաղանդի մի գործ—
Անհաշտ Պոնտոսի
Ափերն այլեկոծ.
Տեսայ ծովափնեայ
Ժայռերը մեծ մեծ,
Տեսայ—Հիացայ՝
Եւ սիրտս բացւեց...
Եւ նորա խորքից—
Որպէս վանդակից
Արծիւը զերի—
Մի կարօտալի
Հառաչանք թռաւ,
Ծուխ գարձաւ, կորաւ
Դէպի ժայռերը
Իմ հայրենիքի,
Դէպի վայրերը
Իմ անցած կեանքի:

1894.

*) Այվազովսկաւ «Սև ծովի ափերը» նկարի առաջ.

Հ Ի Ն Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Կանաչ, վիթխարի ընկուղենու տակ
Իրանց հասակի կարգով, ծալպատակ,
Միասին բազմած,
Մի շրջան կազմած,
Քէֆ էին անում
Եւ ուրախանում
Մեր հսկայ պապերն ու մեր հայրերը—
Գիւղի տէրերը:

Մենք առույգ ու ժիր զեղջուկ մանուկներ—
Երեք գասընկեր,
Նրանց առաջին զլխամերկ կանգնած,
Ձեռքներս խոնարհ կրճքներէս զըրած,
Զիլ, ուժեղ ձայնով, նրանց սպասում,
Տաղ էինք ասում:

Երբ զւարթաձայն մեր երգը լուեց
Մուսկ թամազէն բեխերն ոլորեց,

Նրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Եւ մեզ օրհնեցին—«Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չ'ապրէք...»

Փամանակ անցաւ, նրանք էլ անցան...
Ուրախ երգերըս վշտալի դարձան,
Եւ ես լիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչու ասացին—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չ'ապրէք...

Խաղաղութիւն ձեզ, մեր խելօք պապեր,
Ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել...
Այժմ, տխրութեան թէ քէֆի ժամին,
Մենք էլ օրհնելիս մեր դաւակներին
Ձեր խօսքն ենք ասում—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չ'ապրէք...»

1887.

ԱՐՏԱՍՈՒՔՆԵՐ

Մութն էր երկինքը: Ոչ ոք չը տեսաւ
Բնութեան զործը զիշերւայ մըթնում,
Միայն առաւօտեան, երբոր լուսացաւ,
Մարդարտափայլ ցօղ իջել էր դաշտում:

*

Լուռ էր պօէտը թախիճը դէմքին.
Ինչ էր մտածում մարդիկ չիմացան,
Միմիայն տողերում, երբ ուր կարդացին,
Ըզգայուն սրբտի արցունքը տեսան:

1892.

Ի Մ Ե Ր Գ Ը

Ինձ մի ինզրեր, ես չեմ երգիլ,
Զատ է տըխուր իմ երգը,
Նորա ձայնը կը խորտակի
Քնքոյշ սրտիդ բերկրանքը.
Ո՛չ, քեզ համար այսպիսի երգ
Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վըրայ
Եւ չորացան խոտ ու վարդ,
Անապատ է այնտեղ հիմայ,
ՄԷ, ամալի անապատ.
Հառաչանքից այլևա՞ծ սարում
Իլ ծաղիկ չի դալարում:

Ես երգեցի կէս զիշերին.
Վառ աստղերը իմ երգից

Գունատեցան, դողդողացին
Եւ չըքացան երկնքից.
Մէկը միայն, որ փայլում էր,
Այն էլ մահւան աստղն էր...

Բոյր ու գեփիւռ ես կուգէի
Եւ արշալոյս ոսկեվառ,
Որ մի սիրոյ երգ հիւսէի
Եւ երգէի քեզ համար,
Բայց իմ սիրտը բռնած են դեռ
Թոյն ու թախիժ և զիշեր:

1892.

Ժ Պ Տ Ո Ւ Ն Ա Չ Ք Ե Ր

Դու շատ մի գերւիլ ժպտուն աչքերին.
Նրանք շատ անգամ ծաղիկներ են վառ,
Բուսած կորստեան անդունդի ծայրին
Միամիտներին քարշելու համար:

Ահա պօէտն էլ միանգամ գերւեց
ժպտուն աչքերի հրրապուրանքին,
Նրանից յետոյ էլ վախճան չըկայ
Նորա ըզգայուն հոգու տանջանքին:

Օ՛ր, մի հաւատալ ժպտուն աչքերին.
Նրանք շատ անգամ ծաղիկներ են վառ,
Թունաւոր օձ է պառկած տակերին,
Ներքիւ նախանձի դժոխք է խաւար:

Ահա պօէտն էլ շատ ու շատ անգամ
Խաբւած այդպիսի ժպտուն աչքերից,

Չարամիտներին դարձաւ բարեկամ
Եւ խեղճի սիրտը մաշեց դաւերից:

Դու շատ մի խաբւիլ ժպտուն աչքերից.
Նրանք շատ անգամ ծաղիկներ են վառ,
Բուսնում են սրտի աւերակներից՝
Տխուր յատակը ծածկելու համար:

Ահա պօէտն էլ, որ այնքան յաճախ
Եւ տառապել է և վըշտեր ունի,
Ողջը ծածկելով ժպտում է ուրախ,
Կարծես քեզանից բաղդաւոր լինի...

1894.

Ե Ս Ա Ս Ա Յ Ի . . .

Ես ասացի.— դու ծաղկում ես,
Որպէս շրքեղ մի գարուն,
Եւ բոլորը, ինչ որ ունես,
Կեանք է թովիչ ու սիրուն...
Միայն ափսոս, սիրտդ է մեռած,
Մենակ նա է չոր քեզնում...»
Նա հառաչեց և ինձ ասաց,
— «Մենակ սիրտս չես տեսնում:»

1894.

Կ Ա Ս Կ Ա Ն

Ո՞վ ես, չար ոգի, դ՞ու, որ իմ սրտում
Այսպիսի անխիղճ խօսքեր ես կարդում.—
«Խղճալի, նոյն իսկ այն շըրթունքները,
Որ համբուրում ես կախարդւած մտքով,
Գաղտնի ծաղրում են քո անբիծ սէրը,
Որ փայփայում ես այդքան խնամքով...»

1892.

N - Ի Ն

Մի որոնիր մի ժամանակ
Արհամարձոյ այս կրճքի տակ.
Հառաչանքով դուրս թռաւ նա
Եւ դատարկ է տեղը հիմայ...

Մի արտասուիր. հեռնւ, խնդրեմ...
Քո հայեացքից միայն տընրադէմ
Յիշատակներ պիտի զարթեն,
Եւ ինչ օղուտ... ուշ է արդէն...

1890.

Մ Ո Ռ Ա Յ Ի Ա Ն Ս Է Ր

Սիրում էի երբեմն քեզ...
Այժմ եւս տակաւին
Իմ սրտումը դու ապրում ես,
Բայց ոչ ուժով քո նախկին:

Առաջ հընչում էիր մաքուր,
Որպէս աղօթք իմ հոգում,
Որպէս սիրոյ նախանձ ու հուր՝
Տաք արիւնս բորբոքում:

Այժմ՝ որպէս վաղուց մեռած
Բարեկամի լիշատակ,
Կամ մանկութեան օրով սիրած
Մի հին երգի եղանակ...

Եւ անունըդ այժմ տալիս
Էլ «հոգեակ» չեմ ես ասում,
Չեմ աշխատում քուն մտնելիս,
Որ քեզ տեսնեմ երազում:

Բայց զարմանքով երբեմնապէս
Մտածում եմ ականայ,
Ինչո՞ւ էլ դու սիրելի չես,
Ինչո՞ւ ես քեզ մոռացայ...

1892.

ՆԱ ՆՍՏԱԾ ԷՐ...

Նա նստած էր դաշնամուրի առաջին,
Որպէս երգի մի վշտացած զիցուհի,
Եւ, նըւագի հնչիւններով տըխրագին,
Այնքան ազդու պատմում էր վիշտն իւր սրտի,
Որ թվում էր այն հիացման ժամին ինձ,
Թէ արցունքն էր հոսում տըխուր աչքերից...

1893.

ԻՄ ՍԷՐԸ

Ես սիրելի եմ վարդը տփգոյն,
Սիրուց տանջւած այտերի,
Մեկամաղճոտ խաղաղութիւնն
Զոյգ սևորակ աչերի:

Ես պահել եմ սրտիս խորքում
Մի լուռ գաղտնիք սիրային,
Եւ այն երբէք, ոչ մի երգում
Յայտնելու չեմ աշխարհին:

Բայց և պահել անկարող եմ,
Օ՛ր դժար է համբերել,—
Չասել ինչով բախտաւոր եմ,
Չասել ինչպէս եմ սիրելի:

1892.

Կ Ա Ր Օ Տ

Սրտիս թագուհի,
Կարօտել եմ քեզ.
Ախ, ի՞նչ կը լինի
Յանկարծ յայտնեա,
Եւ թէկուզ իսկոյն
Գարձեալ չքանաս,
Որպէս զիշերւան
Կարճատեւ երազ,
Միայն թէ տեսնեմ
Պատկերըդ մէկ էլ,
Միմիայն թէ ասեմ,
Ոնց եմ կարօտել...

1892.

Ն Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Եթէ մի օր, անուշ ընկեր,
Գաս այցելու իմ շերիմին
Եւ նորաբոյս վառ ծաղիկներ
Տեսնես փուլած չորս կողմին.

Գու չըկարծես թէ հասարակ
Ծաղիկներ են ոտքիդ տակ,
Կամ թէ դարունն է այն բերել—
Իմ նոր տունը զարդարել...

Նրանք չ'երգած իմ երգերն են,
Որ սրտումըս ես տարայ,
Նրանք սիրոյ այն խօսքերն են,
Որ դեռ չ'ասած ես մեռայ...

Նրանք իմ ջերմ համբոյրներն են
Այն աշխարհից ուղարկւած,

Որի ճամբան քո առաջև
Գերեզմանով է փակւած...

Քեզ համար եմ ողջ ուղարկել,
Որ քո կուրծքը զարդարես,
Որ խմանաս, թէև մեռել,
Չեմ մոռացել սակայն քեզ...

Եւ թէ մի օր, անուշ ընկեր,
Գաս այցելու իմ շիրմին,
Յիշիր այս օրն և միտըդ բեր
Քո հեռացած մըտերմին.

Նա, կարկամած շրթունքներով
Գերեզմանի մութ խորքում,
Հսփոխուում է դեռ քո սիրով,
Քո անունն է դեռ երգում...

1894.



16306-16313

208

ՀՀ Ազգային գրադարան



NL1333894 4

ՀՀ Ազգային գրադարան



NL1333893 4

89

